ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2018թ. սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի V դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թամարա Սամսոնյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Մնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն,հերթապահություն/:

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թամարա Սամսոնյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 5-րդ ա դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս:Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Լիլիթ Պապյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Միաձայն ընտրվեց նախագահ:

Որոշեցին.

4-րդ ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.
1.Լիլիթ Պապյան /նախագահ/
2.Լիլիթ Թադևոսյան /անդամ/
3.Սոնա Մարտիրոսյան /անդամ/
4.Նունե Աբրահամյան /անդամ/
5.Հերիքնազ Հովհաննիսյան /անդամ/

2.Լսեցին.- Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Թամարա Սամսոնյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր, գրենական պիտույքներ:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր:

3.Լսեցին.

Ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների նյութական օգնություն ցույց տալու աշակերտների հանգստի ժամանցը կազմակերպելու հարցը:

Դասղեկ Թամարա Սամսոնյանը ներկայացրեց, որ բոլոր դասարաններում էլ կան սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաներ, որոնց դպրոցի, համայնքապետարանի կողմից դասագրքերի, հագուստի համար օգնություն հաճախ տրամադրվում է: Սակայն ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերման, էքսկուրսիաներ, թանգարան, թատրոն այցելությունների ժամանակ անհրաժեշտ է ապահովել նման երեխաների ներկայությունը: Դա շատ կարևոր է նման ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց նորմալ հոգեբանական զարգացումը ապահովելու համար: Որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ, մարդկային հարաբերությունների ձևավորումը, հատկապես, որ դա ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում է գտնվում:

Որոշեցին.
Տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել անապահով ընտանիքի երեխաներին:

Լսեցին.

4.Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:
Դասղեկ Թամարա Սամսոնյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասերը սկսվելու են 9:00, ավարտվելու են 15:00-ին: Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով և դպրոցական համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող-

դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.
Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Լիլիթ Պապյան
Քարտուղար՝ Լիլիթ Թադևոսյան